

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

23/11/2020

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Ալոյանը, Նարինե Գրիգորյանը, Գառնիկ Խաչատրյանը,  
Նեկտար Հովհաննիսյանը, Դավիթ Մովսիսյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

Վարդան Ավագյան, Աշոտ Հարությունյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը**

Լսեցին

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Հաստատել 23.11.2020 թվականի թիվ 11 հերթական նիստի օրակարգը.

1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐՈՒՄ,  
ԿԱՆԱԶԱՊԱՏ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ  
ՇԱՌԱՀԱՏՄԱՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐՈՒՄ, ԿԱՆԱԶԱՊԱՏ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող զբոսայգիներում, կանաչապատ և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում, բազմաբնակարան շենքերի բակերում բնակչության ազատ տեղաշարժը, անվտանգ երթևեկությունը խոչընդոտող, մայթերի մակերեսները վնասող ծառերը՝ չոր, ըստ անհրաժեշտության նաև կիսաչոր ծառերը հատելու և սանիտարական էտում կատարելու համար:
2. Աշխատանքների արդյունքում առաջացած վառելափայտը տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին :
3. Աշխատանքներին մասնակից դարձնել համայնքային ոստիկանության և բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ՎՁ տարածքային բաժնի աշխատակիցներին:
4. Առաջարկել համայնքի ղեկավարին վերը նշված աշխատանքներն իրականացնել << Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ՎԵՐԱԲԱԾԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և „Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

1. Տալ համաձայնություն բաժին 11 խումբ 1 դաս 2 համայնքային բյուջեի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 383,0 հազար դրամ պակասեցնել ավելացնելով՝
  - 168,0 հազ ՀՀ դրամ բաժին 2 խումբ 5 դաս 1 պաշտպանություն /այլ դասերին չպատկանող/ ոլորտի կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին /հոդված 4267 / կամավորական ջոկատի անդամներին ձմեռային ծածկոցներ ,ձեռնոցներ և այլ պարագաներ ձեռք բերելու համար :

- 110,0 հազ ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ հողվածին /հողված 4637 / Արցախից ժամանած բնակիչների ժամանակավոր բնակավայրում Ն.Մշեցի 9 հասցեում կացարանի կոյուղազծի կառուցման ֆինանսավորման համար:
- 105,0 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ոլորտի կապի ծառայություններ հողվածին, մատուցված կապի ծառայությունների դիմաց ֆինանսավորում տալու համար :


2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:


Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0


Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ն/


Ավագանու անդամներ


ԱՐՏԱՇ ԱՅՎԱԶՅԱՆ 

ՌՈՔԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 


ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ 


ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ 

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ 

ՎԱԼՈՂՅԱ ՍՄԲԱՏՅԱՆ 



 ԴԱԿԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 Անժելա Սարգսյանը